



աղանդ, դեւ, կախարդ, անէծք, սատանայ, հրեշտակ, մարգարէ, գեհեն, դրախտ, քահանայ, քէշ, քերոքէ – քրոքէ, պաշտել:

6. Ընտանեկան յարաբերութիւն, գերդաստան – հայր, մայր, եղբայր, քոյր, այր, կին, մանուկ, զաւակ, որդի, աղջիկ, տղայ, դուստր, նու, կեսուր, ամուսին:

7. Մարմնի մասեր, մարմնական գործառնութիւններ - գլուխ, երես, բերան, ակն, ունկն, սիրտ, արգանդ, որովայն, ստամոքս, փոր, ձեռն, ոտն, մատն, ոսկր, ախտ, մահ, մերձեանայ, ծնանել, մեռանել, շէյ, փչել, թքանել, կծել, յորանջել:

8. Զգայական ընկալումներ – սպիտակ, թուխ, հով, ջերմ, ցուրտ, տօթ, անոյշ, քաղցր, դառն, պայծառ, լպիրծ:

9. Ուտելիք եւ խմելիք, ամսանդէն - ճաշ, կերակուր, կաթն, հաց, մեղր, ճարպ, ճրագու, միս, գինի, ուտել, ըմպել, ճաշակել, շիշ, անօթ, , ապակի:

10. Զգացմունք, խառնուածք - երկիւղ, գոհ, վրէժ, սէր, բախտ, սուգ, անմեղ, լաւ, յոռի, պիղծ, զգօն, բարի, չար, արգար, սուտ, չարչարիչ, ձեռնհաս, դժնեայ, մոլի, բռնաւոր, չարագործ, վնասակար, կեղծաւոր, բանասարկու:

11. Արհեստագործութիւն - արուեստ, բրուտ, հիւսն, դարբին, հալոց, կաւ, քար, երկաթ, ոսկի, արձան, կուռք:

12. Տուն, բնակարան, կահկարասի – տուն, տաճար, վրան, դուռն, որմ, յատակ, ձեղուն, սեղան, աթոռ, մահիճք, հայելի, ճրագ, մոմ, մտրակ, վարագոյր:

13. Տարածական յարաբերութիւններ՝ տեղ, ձեւ, չափ - կողմն, տեղի, կոյս, հարաւ, հիւսիսի, արեւմուտք, արեւելք, հեռի, ամփոփ, զատ, առաջի, ի վեր, վերին, ներքին, ահագին, մեծ, փոքր, մանր, ծագ, գոգ, մէջ, թիգ, քիլ:

14. Զայնական արտայայտութիւն, խօսք, գիր - ձայն, բարբառ, բան, խօսել, ասել,

հարցանել, համբաւել, լսել, օրհնել, առասպել, ճառ, պատասխանի, շշնջել, գոչիւն, գրգչիւնք, դանդաղանք, խօշիւն, մագաղաթ, թուղթ, գիր:

15. Տարածքային բաժանումներ, հասարակական յարաբերութիւններ - գիւղ, քաղաք, երկիր, սահման, տէր, թագաւոր, արքայ, կայսր, իշխան, ազնուական, միջնորդ, գործակից, դայեակ, գող, օւլազակ, ընկեր, ծառայ, աշխարհական, կրօնաւոր:

16. Ֆիզիկական տարբեր գործողութիւններ - բերել, գործել, սպանանել, ընկենուկ, ծակել, կրկտել, յագել, հարկանել, կոտորել, խնուկ, խարբալել, փակել, արկանել, հնձել:

17. Օրէնք - դատ, դատաստան, դատաւոր, պատիժ, մեղք, յանցանք, օրէնք, կանոն, հրաման:

18. Ռազմական գործ – սուսեր, գեղարդն, սլաք «նետ», նետ, գէն, վառել, զօր, բանակ, արշաւել, հէն:

19. Թիւ եւ քանակ - երկու, երեք, չորք, եւթն, ինն, տասն, քսան, հարիւր, հազար, առաջին, երրորդ, երկրքեան – երկրքին, աւելի, շատ, սակաւ, անթիւ:

20. Դերանուններ, սպասարկու բառեր եւ մասնիկներ - ես - մեք, դու - դուք, նա - նոքա, ինքն, իւր, այս, այն, նոյն, միւս, որ, ո՞, ահաւասիկ, ահաւանիկ, անդ, աստ, իմն, ինչ, ուստի, ուրեք, ումեք, քան, ոչ, մի՛, ըստ, ընդ, ց, եւ այլն:

Նոր հայկազեան բառարանում բերուած բնագրային վկայութիւններէց ելնելով՝ պէտք է նշել, որ շուրջ չորս տասնեակից աւելի բառեր, որոնք կազմուած են հայերէնի բառակազմական միջոցներով եւ պատկանում են տարբեր խօսքի մասերի, առաջին անգամ վկայուած են «Եղծ աղանդոց» երկում, այսինքն՝ Եգնիկն առաջինը լինելով, օգտագործել է

դրանք իր ճոխ գրական լեզուում, եւ չի բացառուում, որ դրանցից շատերը Եգնիկի նորակերտումները լինեն [Հմմտ. Վ. Առաքելեան, 1961, էջ 120]: Ստորեւ ներկայացնում ենք այդ կարգի բառերի գրեթէ ամբողջական ցանկը.

ազդեցական, ակնամոմ, աղերսալից, անյագաբար, անշարժական, անպիտանութիւն, անստին, անվնասակար, անքննութիւն, անօգտակար, աստեղանշմար, արիւնագոյն, աւազակուտ, բժշկիչ, բուժիչ, բռնադատիչ, գազանաբարոյ, գնդել, դիւապաշտ, եղկութիւն, զովացուցիչ, թելադրութիւն, լուսնակայ, խաղաղիկ, ծովածին, կաթնակեր, կամական, կամակատար, կծծութիւն, հիւծանել, հողմեղէն, ճամարտակել, մեծաջան, մեղկութիւն, մծղնեայ, մշտնջենակից, մուխիւնդ, յամրագնաց, պատճառախնդիր, սեղմանալ, ցամաքական, փամփուշտ, քարոզակից, քէշակարկատ, քնածու:

Միւս կողմից՝ Եգնիկը վկայում է մի ամբողջ շարք հայերէն բարդ, ածանցաւոր եւ բարդածանցաւոր այնպիսի բառեր, որոնք հանդիպում են միայն նրա երկում, ըստ որում ձեռով եւ իմաստով առանձնացող այդ բառերի ճնշող մեծամասնութիւնը ակնյայտ նորակազմութիւններ են, իսկ որոշ բառեր, ըստ ամենայնի, իրենց վրայ կրում են ժողովրդախօսակցական լեզուի կնիք: Նշիւում արձանագրուած եղակի վկայութիւն ունեցող այդ բառերը, որոնց միակ աղբիւրը «Եղծ աղանդոց» երկն է, հիմնականում հետեւեալներն են.

աղանդամիտ, աղուանալ, ամպանալ, անբանաւոր, անդեւ, անկազմութիւն, անմտաւոր, անտեւական, անօսրամարմին, ասուեղ, աստուածախոյզ, արարչախնդիր, արգաւոր, արեգակնատենչիկ, բոցալեզու, գեղեցկագործութիւն, գոյարար, դանդաջանք, դրօշագործութիւն, երկարմտեան, թագաւորագգի, թանձրամարմին, լեռնա-

բերձ, լուսնապաշտ, խառնիչ, խորխուել, ծովացուկ, ծրանալ, կանեփուկ (բսբ.), կարճիչ, կենդանապահ, կեսուր, կորեկահատ, կտիկ, համաբնեայ, համարձակիչ, հեշմակապաշտ, հիւթաբեր, հնարողութիւն, մասնմուտ, մարտուսոյց, միագգի, մորթագերծ, յաշտածին, յետնամեղ, յերկուական, շարժիչ, չանձնաւոր, չգիտանք, չէական, չհամազգի, չմշտնջենաւոր, չնչիկ, պայ, սատանայածին, սարսափիւն, սափասուտ, սերմանարկու, սերմնընկալ, սեւագործ, սուղական, սպիտակարար, վարագանալ, տարմատարմ, տնակալ, քնահատ, քուրական, օձապաշտ, օձապաշտութիւն:

«Եղծ աղանդոց» երկի բառապաշարի ամբողջական քննութիւնը ցոյց է տալիս, որ Եգնիկը մի շարք բառեր գործածել է բոլորովին նոր իմաստներով, որոնք չեն կիրառուում Ե. դարի ինքնուրոյն եւ թարգմանական գործերում, այսինքն՝ յատուկ են միայն Եգնիկի լեզուին: Այսպէս, օրինակ՝ ապակի բառը Եգնիկը գործածել է նաեւ «շիշ» իմաստով, արիականը՝ «պարսկական», բաժը՝ «հատուցում, փոխյատուցում», համազգի-ն «համատեսակ, համանման», նախիրը՝ «բազմութիւն» (փիլիսոփաների), նորարարը՝ «նորաստեղծ», անհարթը՝ «անկազմ» նշանակութիւններով եւ այլն:

Ինչ խօսք, քննուող երկում գործածուող որոշ բառերի ու դարձուածքների իմաստները բնորոշ են եղել ժողովրդական խօսքին, որտեղից էլ մուտք են գործել գրական լեզուի մէջ:

Հետաքրքիր է, որ «Եղծ աղանդոց»-ում հանդիպող առանձին օտար բառեր՝ յունարէնից եւ ասորերէնից փոխառուած, որոնք ամենայն հաւանականութեամբ գործածական չեն եղել հայերէնում, հեղինակը բացատրում է հայերէն համարժէք բառերով: Այսպէս, օրինակ. յունարէն՝ արթր «հող», ելէա «ձիթենի», հիւղ

«նիւթ», մակեղոն «մսավաճառանոց», մե-  
րիսմոս «բաժանուն»։ ասորերէն՝ յաթ  
«տարր»։

Իմաստափոխութեան տարբեր դրսե-  
ւորումներով պայմանաւորուած՝ տուեալ  
լեզուի մէջ առանձնանում են բառերի ո-  
րոշակի խմբեր, որոնք դիտարկուում են  
իբրեւ համանուններ։ Եզնիկի երկում  
նոյնպէս հանդիպում են համանունու-  
թեամբ առնչակցող բառեր, որոնք ձե-  
ւակազմական յատկանիշներով լինում են  
տարբեր խօսքի մասեր (թեքող եւ չթե-  
քող) եւ սովորաբար կազմում են երկու-  
սից ոչ աւելի համանունական շարքեր։  
«Եղծ աղանդոց»-ում, ըստ խօսքամաս-  
յին պատկանելութեան, բառային համա-  
նուններն են. ահն<sup>1</sup> (գոյական), ահն<sup>2</sup> (գո-  
յական), այս<sup>1</sup> (գոյական), այս<sup>2</sup> (դերա-  
նուն), անդ<sup>1</sup> (գոյական), անդ<sup>2</sup> (մակբայ),  
անդ<sup>3</sup> (դերանուն), ապա<sup>1</sup> (մակբայ), ապա<sup>2</sup>  
(շաղկապ), առաջի<sup>1</sup> (նախադրութիւն), ա-  
ռաջի<sup>2</sup> (մակբայ), արդ<sup>1</sup> (գոյական), արդ<sup>2</sup>  
(շաղկապ), զկնի<sup>1</sup> (նախադրութիւն), զկնի<sup>2</sup>  
(մակբայ), իբրեւ<sup>1</sup> (նախադրութիւն), իբ-  
րեւ<sup>2</sup> (մակբայ), ի մէջ<sup>1</sup> (նախադրութիւն),  
ի մէջ<sup>2</sup> (մակբայ), ինչ<sup>1</sup> (դերանուն), ինչ<sup>2</sup>  
(գոյական), իսկ<sup>1</sup> (եղանակաւորող բառ),  
իսկ<sup>2</sup> (շաղկապ), ի վերայ<sup>1</sup> (նախադրու-  
թիւն), ի վերայ<sup>2</sup> (մակբայ), կալ<sup>1</sup> (գոյա-  
կան), կալ<sup>2</sup> (բայ), կոյս<sup>1</sup> (գոյական), կոյս<sup>2</sup>  
(գոյական), հազար<sup>1</sup> (գոյական), հազար<sup>2</sup>  
(թուական), հանդերձ<sup>1</sup> (գոյական), հան-  
դերձ<sup>2</sup> (նախադրութիւն), միայն<sup>1</sup> (ածա-  
կան), միայն<sup>2</sup> (եղ. բառ եւ մակբայ),  
շուրջ<sup>1</sup> (մակբայ), շուրջ<sup>2</sup> (նախադրու-  
թիւն), ո<sup>1</sup> (դերանուն), ո<sup>2</sup> (ձայնարկու-  
թիւն), որթ<sup>1</sup> (գոյական), որթ<sup>2</sup> (գոյական),  
որպէս<sup>1</sup> (շաղկապ), որպէս<sup>2</sup> (դերանուն),  
ուղեղ<sup>1</sup> (ածական, մակբայ), ուղեղ<sup>2</sup> (գոյա-  
կան), ուստի<sup>1</sup> (դերանուն), ուստի<sup>2</sup> (մակ-  
բայ, շաղկապ), չափ<sup>1</sup> (գոյական), չափ<sup>2</sup>  
(նախադրութիւն)։

Ինչ վերաբերում է հոմանիշ եւ հա-  
կանիշ բառերի ընտրութեանն ու կիրառ-  
մանը, ապա ընդհանուր առմամբ կարելի  
է նշել հետեւեալը.

Իբրեւ պէսպիսութիւն՝ Եզնիկը միեւ-  
նոյն բառի կրկնութիւնից խոստովելու  
համար յաճախ դիմում է տարբեր հոմա-  
նիշների գործածութեան, ինչպէս՝ Ոչ ի  
միմիայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ  
արշաւին, այլ յամենայն կողմանս վար-  
զին, եւ ընդ հանուր արշաւին, եւ ընդ  
բնաւս սլանան (14)։ Տուեալ նախադասու-  
թեան մէջ նոյն միտքն արտայայտելու  
համար զուգահեռաբար բերուած են հե-  
տեւեալ հոմանիշ բառերը՝ յամենայն կող-  
մանս վարզին, ընդ հանուր արշաւին, ընդ  
բնաւս սլանան։ Մէկ այլ օրինակ՝ Զի յամե-  
նայն տիս եւ ի բոլոր ժամանակս պատրաս-  
տական մարդոյն գտեալ՝ չզեղծիցի յաս-  
տուած-պաշտութենէ (56)։ Նաեւ՝ Ոչ պար-  
տին զգառն պտուղն զԱրհմն ի նմանէ  
համարել, եւ եթէ դառն հաշուին, զի պատ-  
ճառ զքաղցր պտուղն զՈրմիզդ ի նմանէ  
դնել (84)։

Միւս կողմից՝ հեղինակը երկու հո-  
մանիշ բառեր գործածում է կողք կողքի,  
ինչպէս՝ Տես թէ բնաւ ամենեւին գտանիցի  
ի նմա յիշատակ ցանկութեան (43)։ Եւ  
այլքն ամենեքեան զիրաքանչիր զանցնիր  
զանարգանաց վրէժս պահանջեն (ն.տ.)։

Բացի այդ, Եզնիկի որդեգրած ոճա-  
կան հնարներից է իրար հակիմաստ բա-  
ռերի հակադրութիւնը, այսինքն՝ հոմա-  
նիշներին յաճախակի հակադրում են հա-  
մապատասխան հականիշ բառերը, ինչ-  
պէս՝ Որ զամենայն զոր արար գեղեցիկս  
արար, այս ինքն զբանաւորս եւ զանբանա-  
ւորս, զմտաւորս եւ զանմտաւորս, զխօսունս եւ  
զանխօսունս, զասունս եւ զանասունս (7-8)։  
Զի ոչ երբեք ի միոջէ աղբերէ երկու  
բղիմունք ելանեն, մին քաղցր եւ միւսն  
դառն. եւ ոչ ի միոջէ ծառոյ երկու

պտուղք՝ մին անոյշ եւ մին դաժան (84)։

Փաստօրէն հոմանիշութիւնն ու հա-  
կանիշութիւնը ոչ միայն վեր են հանում  
բառերի իմաստային նրբութիւնները, այ-  
լեւ մեծապէս նպաստում են Եզնիկի փի-  
լիսոփայական դատողութիւնների բացա-  
յայտմանը։

Այնուհետեւ, Եզնիկը յաճախ գործա-  
ծելով երկու նոյնանիշ նախադասութիւն-  
ներ՝ երկրորդ նախադասութեան բառերը  
վարպետօրէն փոփոխութեան է ենթար-  
կում առաջին նախադասութեան բառերի  
համեմատութեամբ։ Այսպէս, օրինակ. Ո-  
րոյ ոչ սկիզբն յուճեքէ առեալ լինելոյ ե-  
թէ ի նմանէ իցէ առեալ սկիզբն էանալոյ  
(6)։ Զի ածն ի չգոյէ ի գոյ զչգոյսն, եւ  
եցոյց յոչնչէ յինչ զչէսն (ն.տ.)։

Այս բոլորով հանդերձ, Եզնիկը իր  
մտքերն աւելի պարզ եւ մատչելի դարձ-  
նելու նպատակով յաճախ է դիմում հա-  
մեմատութիւնների, ըստ որում մի առար-  
կայ կամ երեւոյթ նմանեցնում է մէկ ու-  
րիշի։ Ահա մի բնորոշ օրինակ. Արդ բա-  
րիոք է արեգակն եւ գեղեցիկ բնութեամբ,  
եւ մեզ եւ ամենայն արարածոց՝ որ ի ներ-  
քոյ երկնից՝ յօգուտ եւ ի դարման, իբրեւ  
ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան եւ  
յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն եւ  
զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց  
ի միջոյ փարատելոյ (11)։ Այստեղ, ինչ-  
պէս տեսնում ենք, Եզնիկը արեգակը հա-  
մեմատում է ճրագի հետ, երկինքը՝ առաս-  
տաղի, մեծ տունը՝ աշխարհի, տիեզերքի  
եւ այլն։

**Օգտագործուած գրականութեան ցանկ**

Արեղեան Մ., 1968, Հայոց հին գրականութեան  
պատմութիւն, Գիրք առաջին, Եր., եւ հատ. Է.,  
Երեւան, 1975։  
Արեղեան Մ., 1975, Հայոց հին գրականութեան  
պատմութիւն, Եր., հատ. Է., Երեւան։

Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան,  
հատ. 1, 2, 3, 4, Երեւան, 1971, 1973, 1977, 1979։  
Առաքելեան Վ., 1952, Հայերէնի ոճաբանութեան մի  
քանի խնդիրների մասին, Հայկական Գիտու-  
թիւնների ակադեմիայի «Տեղեկագիր» թիւ 2։  
Առաքելեան Վ., 1975, Գրգոր Նարեկացու լեզուն եւ  
ոճը, Եր, էջ 41։  
Առաքելեան Վ.Գ., 1981, Ակնարկներ հայոց գրա-  
կան լեզուի պատմութեան, Եր։  
Առաքելեան Վ., 1984, Հիմնարկ դարի հայ թարգ-  
մանական գրականութեան լեզուն եւ ոճը, Երե-  
ւան։  
Աւետիսեան Հ. Մ., Ղազարեան Ռ. Ս., 1992, Գրա-  
բարի ձեռնարկ, Երեւան։  
Հիրքման Հ., 2003, Հայերէնի քերականութիւն, ա-  
ռաջին մաս, Երեւան։  
Հիրքման Հ., Հայագիտական ուսումնասիրութիւն-  
ներ, Եր., 2004։  
Յովհաննիսեան Լ., 2002, Յովհան Ոսկեբերանի  
թարգմանութիւնների լեզուական առանձնա-  
յատկութիւնները, Հանդէս ամսօրեայ, էջ 1-44։  
Ղազարեան Ս., 1981, Հայոց լեզուի համառոտ  
պատմութիւն, Եր։  
Ղազարեան Ռ. Ս., 2000, Գրաբարի բառարան,  
Հատ. I եւ II, Երեւան։  
Ղազարեան Ռ. Ս., 2001, Միջին գրական հայերէնի  
բառապաշարը, երեւան։  
Մէլէ Ա., 1978, Հայագիտական ուսումնասիրութիւն-  
ներ, Երեւան։  
Միհասեան Մ., Եզնիկ Կողբացի «Ծառք ընդէմ ա-  
ղանոց», հտ. I, II, 1992, Ժնն։  
Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Ա, Բ, Վեներ-  
տիկ, 1836-37։

**Սկզբնաղբիւրներ**

Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանոց,  
1914, Թիֆլիզ (Բագրեւանդայ եպիսկոպոս Եզ-  
նիկ Կողբացու «Եղծ Աղանոց»-ի ներկայ  
սպագրութիւնն արտատպուած է Ծանկի Արա-  
մեանի 1860 թուին Փարիզում հրատարակուած  
օրինակից)։  
Եզնիկ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ  
աղանոց, 1826, ի Վեներտիկ, ի Ս. Ղազար,  
ՌՄՉԵ։  
Հայկական Համաբարտ Եզնիկայ Կողբացոյ Բագ-  
րեւանդայ եպիսկոպոսի «Եղծ Աղանոց», Եր.,  
1972։  
[http://www.digilib.am/texts/eznik\\_kolbatsi/index.html](http://www.digilib.am/texts/eznik_kolbatsi/index.html)